ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

15 ՀՈՒԼԻՍ 2016, 61-Ա

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 15-Ի ԹԻՎ 54-Ա ՈՐՈՇՄԱՆ ՀԱՎԵԼՎԱԾ 1-ՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ և ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Արդարադատության ակադեմիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով, Արդարադատության ակադեմիայի կառավարման խորհուրդը, «Արդարադատության ակադեմիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետով նախատեսված կազմով, *որոշում է.*

Արդարադատության ակադեմիայի կառավարման խորհրդի 2016 թվականի փետրվարի 15-ի «Դատավորների և արդարադատության ակադեմիայում ուսումնառությունն ավարտած ու դատավորների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց, դատական ծառայողների, դատական կարգադրիչների վերապատրաստման, ինչպես նաև դատավորների հատուկ ուսուցման 2016 թվականի ծրագրերը հաստատելու մասին» թիվ 54-Ա որոշման հավելված 1-ում կատարել հետևյալ փոփոխությունը և լրացումը՝

1. Դատավորների և Արդարադատության ակադեմիայում ուսումնառությունն ավարտած ու դատավորների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց տարեկան վերապատրաստման ուսուցման ծրագրի վարչաիրավական մասնագիտացմամբ հատուկ մասնագիտական դասընթացների մոդուլում ավելացնել «Փախստականների իրավունքները» դասընթացը՝ A-012-16 դասիչով:
2. 6-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. *«Ծրագիրն իրականացվում է առկա և հեռավար ուսուցման ձևով: Հարակից մասնագիտական դասընթացների մոդուլում ընդգրված դասընթացները, ինչպես նաև վարչաիրավական մասնագիտացմամբ հատուկ մասնագիտական դասընթացների մոդուլում ընդգրկված «Փախստականների իրավունքները» դասընթացը կազմակերպվում են հեռավար, իսկ ընդհանուր և հատուկ մասնագիտական դասընթացների մոդուլում ընդգրկված մյուս դասընթացները՝ առկա ուսուցման ձևով»:*

Արդարադատության ակադեմիայի կառավարման խորհրդի նախագահ Ե.Խունդկարյան

Արդարադատության ակադեմիայի կառավարման խորհրդի անդամներ Հ.Ասատրյան

Հ.Բեդևյան

Ա.Մկրտչյան